«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2008

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԱԿՈՒՅՑ

Ընդհանուր տեղեկություններ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ վերաբերյալ

Պետական գրանցման համար՝ 264.120.04128

Գրանցման վայր և ամսաթիվ՝ ք. Երևան, 30.12.1997թ.

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 43

Հեռախոս՝ (37410) 294810

Ֆաքս՝ (37410) 294724

Էլ. փոստ՝ inbox@armrusgasprom.am

Ինտերնետային կայք՝ www.armrusgasprom.am

Հայ–Ռուսական «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարարության, «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության («Գազպրոմ» ԲԲԸ), «ITERA International Energy L.L.C.» («ITERA») կողմից 1997 թվականի օգոստոսի 30-ի Հիմնադիր Պայմանագրի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա՝ համաձայն 1997 թվականի հունվարի 18-ին ք. Մոսկվայում ՀՀ կառավարության և «Գազպրոմ» ԲԲԸ-ի միջև կնքված «Հայաստանի Հանրապետության տարածքում գազատարերի շինարարության և շահագործման, Հայաստանի Հանրապետության տարածքով ռուսական բնական գազի տարանցման, էլեկտրաէներգիայի արտադրության և երրորդ երկրներ դրա տարանցման համագործակցության վերաբերյալ » Համաձայնագրի:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն ռուսական բնական գազը Հայաստան առաքման մենաշնորհ ունեցող ընկերություն է: Բնական գազի սակագների մեծությունները սահմանվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ գործունեության հիմնական նպատակն է բնական գազի մատակարարումն ու իրացումը Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում, Հայաստանի Հանրապետության տարածքով բնական գազի տարանցումը երրորդ երկրներ, նոր ստեղծվող տարանցիկ գազատարերի նախագծման, ֆինանսավորման, շինարարության և շահագործման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև՝ գործող գազատրանսպորտային և գազաբաշխիչ համակարգերի շահագործումը, ընդլայնումն ու վերակառուցումը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ գործունեության առարկան է.

- բնական գազի փոխադրում, պահեստավորում, վերամշակում, բաշխում և իրացում,
- էլեկտրաէներգիայի արտադրություն, փոխադրում, տարանցում, բաշխում և իրացում, այդ թվում երրորդ երկրներ,
- Հայաստանի Հանրապետությունում գործող գազատրանսպորտային և գազաբաշխիչ համակարգերի, ստորգետնյա գազի պահեստարանների վերակառուցում և ընդլայնում,
- հեղուկ գազի մատակարարում, փոխադրում և իրացում,
- Հայաստանի Հանրապետությունում և երրորդ երկրներում գազատրանսպորտային և գազաբաշխիչ համակարգերի ու ենթակառուցվածքների նախագծում, ֆինանսավորում, շինարարություն և շահագործում:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կառուցվածքն ունի հորիզոնական ինտեգրված բնույթ: Ընկերությունն իրականացնում է Հայաստանի գազամատակարարման համակարգի կենտրոնացված կառավարումն ու աշխատանքի կոորդինացումը, բնական գազի ներկրումը և դրա հոսքերի կարգավարումը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կառուցվածքն իր մեջ ներառում է.

- 17 գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղ (ԳԳՄ), որոնք կազմակերպված են տարածքային սկզբունքով և պատասխանատու են վերջնական սպառողներին գազի իրացման, գազաբաշխման ցանցի շահագործման և տեխնիկական սպասարկման համար,
- «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղը կազմակերպում է գազամատակարարման համակարգի աշխատողների ուսուցումն ու որակավորման բարձրացումը, մասնագիտական ծառայություններ է մատուցում գազային համալիրի և այլ կազմակերպություններին,
- 6 դուստր ընկերություններ.

  «Տրանսգազ» ՍՊԸ-ն ապահովում է բնական գազի փոխադրումը, փոխադրվող և պահեստավորվող բնական գազի հաշվառումը, ստորգետնյա պահեստարաններ գազի ներմղումը, պահեստավորումն ու արտամղումը:

  «Տրանսգազշին» ՍՊԸ-ն իրականացնում է մայրուղային, բաշխիչ գազատարերի և գազի ցանցերի շինարարություն:

«Ավտոգազ» ՍՊԸ-ն կազմակերպում է հեղուկ և սեղմված բնական գազի ընդունումը, պահեստավորումը, փոխադրումն ու իրացումը, ապահովում է հեղուկ և սեղմված բնական գազի ավտոգազալիցքավորման կայանների և գազով լիցքավորող ու գազ տեղափոխող ավտոցիստերների տեխնիկական շահագործումը, իրականացնում է հեղուկ ու սեղմված բնական գազով մեքենաների սպասարկումը և լիցքավորումը, ինչպես նաև ավտոմեքենաների գազի սարքավորումների տեղադրումը, փորձարկումը, կարգաբերումը, վերանորոգումը և հավատարմագրումը:

«Արմավիրի գազմաշ» ՍՊԸ-ն կազմակերպում է մեքենաշինական արտադրանքի, գազի սարքերի և սարքավորումների, մետաղական, պլաստմասե և փայտե իրերի, կենցաղային և արդյունաբերական նշանակության սարքավորումների արտադրությունը:

«Ավտոտրանսգազ» ՍՊԸ-ն մատուցում է ավտոտրանսպորտային ծառայություններ, իրականացնում է ավտոմեքենաների հիմնական և ընթացիկ վերանորոգումը, տեխնիկական սպասարկումն ու շահագործումը:

«Բութան» ՍՊԸ-ն իրականացնում է հեղուկ գազի ընդունումը, պահեստավորումը, փոխադրումը և իրացումը, կազմակերպում է հեղուկ գազի բալոնների վերանորոգումն ու ատեստավորումը, ապահովում է գազալիցքավորման կայանների սարքավորումների շահագործումը, ընթացիկ վերանորոգումն ու կարգաբերումը, բութանաօդային խառնուրդի արտադրությունը:

- «Հրազդան-5-ի շինարարության տնօրինություն» հիմնարկը կազմակերպում է Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկում իրականացվող աշխատանքները: 2006 թվականին Հայաստանի Հանրապետության և «Գազպրոմ» ԲԲԸ միջև ստորագրվել է համաձայնագիր, համաձայն որի «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ձեռք է բերել Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի ակտիվները՝ դրա շինարարության ավարտի և արդիականացման պարտավորություններով: Ներկայումս «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի մասնագիտացված ստորաբաժանումը՝ ի դեմս «Հրազդան-5-ի շինարարություն տնօրինություն» հիմնարկի, գրեթե ավարտել է բոլոր նախապատրաստական աշխատանքները և ստացել է բլոկի վրա աշխատանքների իրականացման թույլտվության համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերը:

- «Գազատրանսպորտային համակարգի կառուցվող օբյեկտների տնօրինություն» հիմնարկը կոորդինացնում է աշխատանքները և իրականացնում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի գազատրանսպորտային համակարգի օբյեկտների շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի գործառույթները: «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի «Գազատրանսպորտային համակարգի կառուցվող օբյեկտների տնօրինություն» հիմնարկը ստեղծվել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Տնօրենների Խորհրդի որոշմամբ՝ 2007թ. ապրիլին:

«ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ-ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ԵՆ.

- Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը,
- Ընկերության Տնօրենների Խորհուրդը,
- Գլխավոր տնօրեն, Ընկերության Վարչությունը:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետերերն են.

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ի դեմս ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ք. Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 2,
http://www.minenergy.am

«Գազպրոմ» Բաց Բաժնետիրական Ընկերությունը (Ռուսաստանի Դաշնություն)
Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա 117997,
Նամետկինի փող. 16
http://www.gazprom.ru

«Իտերա Ինթերնեյշնլ Էներջի» ՍՊԸ (ԱՄՆ)
Gate Parkway North 9995, Suite 400
Jacksonville, Florida 32246
http://www.itera.com

Կանոնադրական կապիտալ

2008թ. տեղի ունեցան «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հասարակ անվանական բաժնետոմսերի երկրորդ և երրորդ լրացուցիչ թողարկումները ի օգուտ «Գազպրոմ» ԲԲԸ-ի,

որոնց արդյունքում «Գազպրոմ» ԲԲԸ-ն ձեռք բերեց «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 26 682 792 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, յուրաքանչյուրը 5026,5 ՀՀ դրամ անվանական արժեքով, 134,1 մլրդ. դրամ ընդհանուր ծավալով:

«Իտերա Ինթերնեյշնլ Էներջի» ՍՊԸ-ն իրեն պատկանող 2800000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, ինչը կազմում էր «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ վճարված կանոնադրական կապիտալի 4.45%-ը, վաճառել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ խոշոր բաժնետեր «Գազպրոմ» ԲԲԸ-ին:

Գործարքը «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում գրանցվել է 12.03.2009թ.: «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կանոնադրությունում համապատասխան փոփոխություն կատարելու գործընթացը ներկայումս ընթացքի մեջ է:

31.12.2008թ. դրությամբ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կանոնադրական կապիտալը կազմում է 365 622 256 777.5 ՀՀ դրամ, որը բաժանված է 72 738 935 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 5 026.5 դրամ անվանական արժեքով:

31.12.2008թ. դրությամբ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 316 658 361 276 ՀՀ դրամ (62 997 784 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 5 026.5 դրամ անվանական արժեքով):

Աղյուսակ 1

Բաժնետերեր	Կանոնադրական կապիտալ		% կանոնադրական կապիտալում	Վճարված կանոնադրական կապիտալ		% վճարված կանոնադրական կապիտալում
	դրամ	հատ		դրամ	հատ	
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	63 333 900 000.0	12 600 000	17.32	63 333 900 000	12 600 000	20.00
«Գազպրոմ» ԲԲԸ	288 214 156 777.5	57 338 935	78.83	239 250 261 276	47 597 784*	75.55
«Իտերա Ինթերնեյշնլ Էներջի» ՍՊԸ	14 074 200 000.0	2 800 000	3.85	14 074 200 000	2 800 000	4.45
Ընդամենը՝	**365 622 256 777.5**	**72 338 935**	**100.00**	**316 658 361 276**	**62 997 784**	**100.00**

* Մնացած (չվճարված) 9741151 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը փոխանցվում են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ տրամադրության տակ մարման նպատակով:

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը Բաժնետերերի Ընդհանուր Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում, բացառությամբ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի, իրականացնում է Տնօրենների Խորհուրդը:

Ընկերության Տնօրենների Խորհուրդը ընտրվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից յոթ հոգանոց կազմով (երեք ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունից, երեք ներկայացուցիչ «Գազպրոմ» ԲԲԸ-ից և մեկ ներկայացուցիչ «Իտերա Ինթերնեյշնլ Էներջի» ՍՊԸ-ից):

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի կազմը հետևյալն է.

1. Վալերի Գոլուբև, Տնօրենների խորհրդի նախագահ,
2. Արմեն Մովսիսյան, Տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ,
3. Ելենա Կարպել, Տնօրենների խորհրդի անդամ,
4. Դմիտրի Լավրով, Տնօրենների խորհրդի անդամ,
5. Իոսիֆ Իսայան, Տնօրենների խորհրդի անդամ,
6. Կարեն Կարապետյան, Տնօրենների խորհրդի անդամ,
7. Գենադի Սկիդանով, Տնօրենների խորհրդի անդամ:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր տնօրենը՝ Ընկերության Վարչության հետ համատեղ: Այս մարմինները կազմակերպում են Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի և Ընկերության Տնօրենների Խորհրդի որոշումների կատարումը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Վարչությունն ունի հետևյալ կազմը.

1. Կարեն Կարապետյան, Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն,
2. Անատոլի Պոդմիշալսկի, Վարչության նախագահի տեղակալ,
3. Ելենա Բորովլևա, Վարչության անդամ,
4. Ալեքսանդր Տերնյուկ, Վարչության անդամ,
5. Բորիս Գյուլումյան, Վարչության անդամ,
6. Աշոտ Հովսեփյան, Վարչության անդամ,
7. Նաիլ Ախմետվալեև, Վարչության անդամ:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ բիզնեսի արդյունքների և զարգացման վերաբերյալ տեղեկություններ

Բնական գազի ներկրում և իրացում

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ստեղծման պահից բնական գազի ներկրման և իրացման ծավալներում նկատվում է կայուն դինամիկ աճ: Այսպես, 2008 թվականին հանրապետությունում բնական գազի իրացման ծավալները կազմել են 2 078,96 մլն.խ.մ, ինչը 2,7 անգամ գերազանցում է 2000թ. համանման ցուցանիշը և 11,2%-ով 2007թ. ցուցանիշը:

2007-2008թթ. գազասպառման կառուցվածքը, /մլն.խ.մ/

	2007	2008	+/- %
Բնակչություն	532,15	589,46	↑ 10,8
Էներգետիկա	506,92	607,37	↑ 19,8
Արդյունաբերություն	475,07	453,54	↓ 4,53
Բյուջետային կազմակերպություններ	27,2	35,69	↑ 31,2
ԱԳԼՃԿ	285,63	343,94	↑ 20,4
Այլ	42,3	49,0	↑ 29,8
Ընդամենը	1869,3	2078,96	↑ 11,2

Այսպիսով, 2008թ. նախորդ տարվա համեմատությամբ գազի ընդհանուր սպառումը աճել է 11,2%-ով: Համաձայն գազասպառման կառուցվածքի՝ 2008թ. նկատվում է գազասպառման աճ ինչպես բնակչության, այնպես էլ էներգետիկայի, ԱԳԼՃԿ-երի (գազալիցքավորման կայաններ) և բյուջետային կազմակերպությունների կողմից: Գազի սպառման փոքր նվազեցում նկատվում է միայն արդյունաբերությունում, ինչը պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում բացասական միտումներով և Հայաստանի խոշոր արդյունաբերական ընկերությունների արտադրության ծավալների վրա դրանց ազդեցությամբ:

Գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշներ

Հիմնական ֆինանսական ցուցանիշների դինամիկան, 2007-2008թթ.

	Չափման միավոր	2007	2008	Դինամիկա %
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	մլն. դրամ	102 735	106 557	3,7
Զուտ շահույթ (վնաս)	մլն. դրամ	11 193	4 563	-59,2
Զուտ ակտիվներ	մլն. դրամ	191 216	329 300	72,2
Կարճաժամկետ պարտավորություններ	մլն. դրամ	94 769	30 550	-67,8
Երկարաժամկետ պարտավորություններ	մլն. դրամ	1 880	1 860	-1,1

Հաշվետու տարում 2007թ. համեմատությամբ իրացումից հասույթը ավելացել է 3,9 մլրդ. դրամով, Ընկերության զուտ ակտիվները աճել են 138,1 մլրդ. դրամով: 2007թ. համեմատ 2008թ. զուտ շահույթի նվազումը պայմանավորված է պարտավորությունների առկայությամբ և 2007թ. վերջին դրանց վերագնահատմամբ և կապված է 2008թ. ՀՀ ԿԲ-ի ԱՄՆ դոլար/դրամ միջին կշռված փոխարժեքի մինչև 305,8 դրամ/ԱՄՆ դոլար նվազման հետ (2007թ. 345,02 դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի դիմաց):

Ինչ վերաբերում է պարտավորություններին, ապա 2008թ. նկատվում է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ պարտավորությունների պակասեցման միտում, ինչը կապված է 2008թ. Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման հետ:

Ֆինանսական վիճակի գնահատում և գործունեության ֆինանսական ցուցանիշների վերլուծություն

Շահութաբերության ցուցանիշներ /2007-2008թթ./

Շահութաբերություն	2007	2008
Վաճառքի շահութաբերություն, %	10,9	4,3
Ակտիվների շահութաբերություն, %	3,89	1,26
Սեփական կապիտալի շահութաբերություն	6,29	1,46
Եկամուտների գեներացման գործակից, %	1,55	1,61

2008թ. արձանագրվել է վաճառքի և ակտիվների շահութաբերության ցուցանիշների իջեցում Ընկերության զուտ շահույթի չափի նվազման հետևանքով, ինչը պայմանավորված է պարտավորությունների առկայությամբ և 2007թ. վերջին դրանց վերագնահատմամբ՝ կապված 2008թ. ՀՀ ԿԲ-ի ԱՄՆ դոլար/դրամ միջին կշռված փոխարժեքի մինչև 305,8 դրամ/ԱՄՆ դոլար նվազման հետ (2007թ. 345,02 դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի դիմաց):

Եկամուտների գեներացիայի գործակիցը ունի կայուն դրական դինամիկա և վկայում է ակտիվների արդյունավետ օգտագործման մասին:

Ֆինանսական կայունության ցուցանիշներ /2007-2008թթ./

Ֆինանսական կայունություն	*2007*	*2008*
Ֆինանսական անկախության գործակից	0,66	0,9
Փոխառու կապիտալի օգտագործման գործակից	0,34	0,1
Պարտավորությունների հարաբերակցությունը սեփական կապիտալի նկատմամբ	0,51	0,1

Կազմակերպության կայունության կարևոր բնութագրիչներ են կապիտալի կառուցվածքի ցուցանիշները, մասնավորապես, սեփական կապիտալի հարաբերակցությունը ընդհանուր ակտիվներին, որը բնութագրում է ֆինանսական անկախության աստիճանը: «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ պարագայում տվյալ գործակցի արժեքը բավականին բարձր է եղել 2007-2008թթ., ինչը վկայում է այն մասին, որ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ գործունեությունը հիմնականում ֆինանսավորվել է սեփական միջոցներով:: 2008թ. Ընկերության փոխառու և սեփական միջոցների հարաբերակցության գործակցի նվազեցումը պայմանավորված է սեփական կապիտալի ավելացմամբ:

Գործարար ակտիվության ցուցանիշներ /2007-2008թթ./

Գործարար ակտիվություն	*2007*	*2008*
Կառուցվածքի գործակից	1,62	4,56
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3,23	2,31
Ֆոնդահատույցի գործակից	0,75	0,75

Կառուցվածքի գործակցի աճը 2008թ. նախորդ՝ 2007թ. համեմատությամբ պայմանավորված է ոչ ընթացիկ ակտիվների աճով և հիմնականում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ գործունեության առանձնահատկությամբ:

Դեբիտորական պարտքի շրջանառելիության գործակիցը արժեքը դեբիտորական պարտքի օգտագործման գնահատման չափանիշ է: Այս ցուցանիշի աճը կապված է դեբիտորական պարտքի նվազեցման հետ:

Իրացվելիության ցուցանիշներ /2007-2008թթ./

Իրացվելիություն	*2007*	*2008*
Ընթացիկ իրացվելիության գործակից	1,16	**2,13**
Արագ իրացվելիության գործակից	0,88	**1,74**
Բացարձակ իրացվելիության գործակից	0,16	**0,74**

2008թ. արդյունքներով «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հաշվեկշիռը համարվում է իրացվելի, և բոլոր գործակիցներն էլ համապատասխանում են ընդունված նորմաներին:

Գազաէներգետիկ ծրագրեր

Գազամատակարարման հուսալիության բարձրացման նպատակով ՀՀ կառավարության կողմից նախաձեռնվել է Իրան-Հայաստան գազատարի շինարարության ծրագիրը, որը թույլ է տալիս ընդլայնել բնական գազի մատակարարման ռեսուրսային բազան և ստեղծել երկրորդ տեխնոլոգիական մուտքը Հայաստանի Հանրապետություն:

Մատակարարվող բնական գազի դիմաց վճարումը ենթադրվում է իրականացնել «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» սկզբունքով: Էլեկտրաէներգիայի արտադրման ծավալը պետք է ապահովի դրա առաքումը Իրանի Իսլամական Հանրապետություն պայմանագրային ծավալներով, իսկ «շահութաբեր» Էլեկտրաէներգիայի իրացումը՝ գազի փոխադրման արժեքի վճարումը և ծրագրի ներդրումների ետ գնումը: Իրանական գազի օգտագործմամբ Էլեկտրաէներգիայի արտադրությունը նախատեսվում է ՀՀ առկա ՋԷԿ-երի ազատ հզորություններով, ինչպես նաև շահագործման նախատեսվող երկու էներգաբլոկներով՝ Երևանի ՋԷԿ-ի (230 ՄՎտ) և Հրազդանի ՋԷԿ-ի հզորություններով, որոնք գործող էներգաբլոկերից առանձնանում են առավել բարձր արդյունավետությամբ:

2007թ. սկսվել է Քաջարանից Արարատ գազատարի երկրորդ հատվածի շինարարությունը:

Համաձայն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի կողմից հաստատված աշխատանքների իրականացման ժամանակացույցի՝ շինարարության ավարտի և շահագործման հանձնելու ժամկետը սահմանվել է 2009 թվականի առաջին եռամսյակը:

2008 թվականի չորրորդ եռամսյակում ամբողջությամբ ավարտվել է «Քաջարան-Արարատ» գազատարի գծային հատվածի շինարարությունը 187,5 կմ երկարությամբ:

01.01.2009թ. դրությամբ կատարված կապիտալ ներդրումների ծավալը շինարարության սկզբից կազմել է 39 806,8 մլն. դրամ (ներառյալ ԱԱՀ), որից 2008թ. 11800,3 մլն. դրամ (ներառյալ ԱԱՀ):

Գազամատակարարման ռեժիմների կարգավորման և բնակչությանն ու արդյունաբերական օբյեկտներին անվտանգ և անընդհատ գազամատակարարման նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով բաշխման ցանցի ռեժիմային պարամետրերը, «Երևան քաղաքի գազամատակարարման համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում 2008թ. սկսվեց Երևանի քաղաքի ԳԲԿ-4-ի (գազաբաշխիչ կայան) շինարարությունը:

Երևան քաղաքի ԳԲԿ-4-ը նախագծով նախատեսված է որպես անհատական գազաբաշխիչ կայան՝ 120,0 հազ.ն.մ3/ժամ արտադրողականությամբ:

Կայանի ընդհանուր արժեքը պայմանագրի համաձայն 2190.8 մլն. դրամ է: Շինարարությունը սկսվել է 2008թ. հուլիսին, ավարտը նախատեսված է 2009թ. մարտին: 01.01.2009թ. դրությամբ կատարված կապիտալ ներդրումների ծավալը շինարարության սկզբից կազմել է 1205,8 մլն. դրամ (ներառյալ ԱԱՀ):

Հայաստանի Հանրապետության Կառավարության և «Գազպրոմ» ԲԲԸ միջև 2006թ. ստորագրվել էր համաձայնագիր, համաձայն որի «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ձեռք է բերում Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի ակտիվները՝ դրա շինարարությունը և արդիականացումը ավարտին հասցնելու պարտավորություններով:

Էներգաբլոկը շահագործման հանձնելուց հետո «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կապահովի էլեկտրաարտադրման հայկական շուկայի զգալի մասը և հնարավորություն կստանա մեծացնել էլեկտրաէներգիայի արտահանման ծավալները դեպի հարևան երկրներ: «Հրազդան-5» նախագծի իրականացումը անմիջականորեն կապված է կարևոր

նշանակություն ունեցող Իրան-Հայաստան գազամուղի շինարարության հետ: Մասնավորապես, համաձայնագրի համաձայն՝ Հրազդան-5 էլեկտրակայանում արտադրված էլեկտրաէներգիան ուղղվելու է Իրանի էներգահամակարգ՝ որպես Հայաստան ներկրվող իրանական գազի դիմաց վճարման միջոց:

Գազի տուրբինի տեղակայմամբ Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի արդիականացման ծրագրի շրջանակներում 2008 թվականին «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ «Հրազդան-5-ի շինարարության տնօրինություն» Հիմնարկի կողմից ավարտվել են հետևյալ աշխատանքներն ու միջոցառումները.

1. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի կողմից քննության է ենթարկվել և հաստատվել է «Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի արդիականացման տեխնիկատնտեսական հիմնավորումը»,
2. հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ը՝ ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց միջգերատեսչական փորձագիտական հանձնաժողով «հատուկ համալիր փորձաքննություն» ռեժիմով օբյեկտի փորձաքննություն անցկացնելու նպատակով, որը տվեց իր դրական եզրակացությունը,
3. անկախ գնահատողի՝ «Deloitte & Touche CIS» ՍՊԸ-ի ներգրավմամբ ավարտվեց Հրազդան-5 Գույքային համալիրի դրամային գնահատումը,
4. ստորագրվեց Հրազդան-5-ի գույքի առուվաճառքի պայմանագիրը, և ամբողջ գույքը ձևակերպվեց որպես «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ սեփականություն, այդ թվում՝ անշարժ գույքը ստացավ համապատասխան ձևակերպում պետական կադաստրում,
5. մրցութային սկզբունքով ստորագրվեցին մի շարք պայմանագրեր՝ ժամկետներում և պատշաճ մակարդակով ծրագրի իրականացումը ապահովելու համար:

Ներդրումային գործունեություն

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ներդրումային քաղաքականությունը իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

1) գազատրանսպորտային համակարգ.
   - մայրուղային գազատարերի շինարարություն և վերականգնում,
   - Աբովյանի ԳՍՊԿ,
2) գազաբաշխման համակարգ.
   - գազիֆիկացում (նոր գազաբաշխման համակարգի շինարարություն),

- գազաբաշխման համակարգի վերանորոգում և վերականգնում,

3) գազային համալիրի ենթակառուցվածք.

- բնական գազի հաշվառման համակարգի արդիականացում,
- նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում,
- շենքերի և շինությունների վերանորոգում, ընդլայնում, վերականգնում և արդիականացում,
- մեքենա-մեխանիզմների և տրանսպորտային միջոցների ձեռքբերում:

2008թ. ընթացքում գազատրանսպորտային և գազամատակարարման համակարգերի վերակառուցման, արդիականացման և զարգացման, ինչպես նաև գազային համալիրի այլ ներդրումային ծրագրերում ներդրումների գումարային ծավալը կազմել է 51 մլրդ. դրամ, այդ թվում.

- գազատրանսպորտային համակարգ՝ 3 մլրդ. դրամ, որից 0,5 մլրդ. դրամ Աբովյանի ԳՍՊԿ-ի հզորությունների արդիականացման մասով,
- գազաբաշխման համակարգ՝ 11,16 մլրդ. դրամ, որից 2,8 մլրդ. դրամ գազաֆիկացման մասով (բաժանորդների թվաքանակի աճ 57,7 հազարով) և 6,6 մլրդ. դրամ գազաբաշխման համակարգի վերակառուցման և վերականգնման մասով,
- անվտանգության համակարգերի ներդնում բազմաբնակարան շենքերում՝ 0,74 մլրդ. դրամ,
- գազատրանսպորտային համակարգի վերակառուցում և ընդլայնում՝ 11,8 մլրդ. դրամ,
- Հրազդան-5-ի շինարարության և արդիականացման ավարտին ուղղված ներդրումներ՝ 24,0 մլրդ. դրամ:

2009թ. հունվարի 1-ի դրությամբ հնարավոր բաժանորդների թվաքանակը կազմում է 675053, իսկ փաստացի բաժանորդների թվաքանակը՝ 573955, որը կազմում է հնարավոր բաժանորդների 85%-ը:

Հնարավոր, փաստացի և պոտենցիալ բաժանորդների թվաքանակը /2001-2008թթ./



«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ գործունեության հիմնական ցուցանիշներ

	2007	2008	Դինամիկա, %
Ֆինանսական ցուցանիշներ			
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ, մլն. դրամ	102 735	106 557	*3,7*
Զուտ շահույթ (վնաս), մլն. դրամ	11 193	4 563	*-59,2*[1]
Զոտ ակտիվներ, մլն. դրամ.	191 216	329 300	*72,2*
Կարճաժամկետ պարտավորություններ, մլն. դրամ	94 769	30 550	*-67,8*
Ներդրումներ, մլրդ. դրամ	40.5	50.6	*24,9*
Վճարումներ պետբյուջե, մլրդ. դրամ	21.9	19.5	*-11*[2]
Աշխատողների թվաքանակ, մարդ	6 848	6 953	*1,5*
Միջին աշխատավարձ, հազ. դրամ	116.4	118	*1,4*
Հիմնական գործունեության ցուցանիշները			
Բնական գազի ներկրում, մլն. խ.մ	2 054	2 254	*9,7*
Բնական գազի իրացում, մլն. խ.մ	1 869	2 078	*11,2*
Բաժանորդների թվաքանակը տարեվերջին	516 272	573 955	*11,2*
Պոտենցիալ բաժանորդների թվաքանակը տարեվերջին	654 142	675 053	*3,2*
Գազաֆիկացված բնակավայրերի թվաքանակը	472	531	*12,5*
Բնական գազի ծավալը պահեստարանում, մլն.խ.մ	112	123	*9,8*
Գազաբաշխիչ կայաններ, հատ	65	70	*7,7*
Էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններ, հատ	427	465	*8,9*
Բազմաբնակարան շենքերի բաժանորդների անվտանգության համակարգեր, հազ. հատ	-	30	*-*
Գազաբաշխիչ ցանցի երկարությունը տարեվերջին, կմ	8 777	9 688	*10,4*

[1] Տարբերությունը պայմանավորված է 2008թ. ՀՀ ԿԲ-ի ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին կշռված փոխարժեքի նվազեցմամբ, որը հաշվի չառնելու պարագայում 2008թ. շահույթի մեծությունը նախորդ տարվա համեմատությամբ պայմանականորեն աճել է 1.6 անգամ:
[2] Տարբերությունը հիմնականում պայմանավորված է 2008թ. ընթացքում . ՀՀ ԿԲ-ի ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին կշռված փոխարժեքի նվազեցմամբ, որը հաշվի չառնելու պարագայում 2008թ. Ընկերության կողմից պետբյուջե կատարված ԱԱՀ-ի վճարումները նախորդ տարվա համեմատությամբ պայմանականորեն աճել են 3,4 մլրդ. դրամով:

Ռիսկային գործոններ

Ինչպես ցանկացած կազմակերպություն, այնպես էլ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն իր գործունեության ընթացքում առնչվում է տարբեր ռիսկային գործոնների:

Ստորև ներկայացվում են Ընկերությանն առնչվող առավել կարևոր ռիսկերը, որոնք, սակայն, չեն կարող համարվել ամբողջական և ներառել բոլոր հնարավոր ապագա զարգացումները.

1. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ֆինանսական գործունեության արդյունքներն էապես կախվածություն ունեն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացվող բնական գազի սակագնային քաղաքականությունից: Տվյալ քաղաքականության փոփոխությունները, որոնք կարող են նվազեցնել բնական գազի և/կամ Ընկերության ծառայությունների սակագները, կարող են բացասաբար անդրադառնալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա, ինչն իր հերթին կարող է դառնալ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ պարտատոմսերի ներդրումային որակի նվազեցման պատճառ: Սակայն 2008թ. ընթացքում Ընկերությունը չի առնչվել այս ռիսկի հետ, դեռ ավելին՝ 2009թ. ապրիլի 1-ից բնական գազի սակագները բարձրացվել են:
2. Շուկայական ռիսկ: Երկրի տնտեսական պայմանների վատթարացումը կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության շահութաբերության վրա: Այնպիսի գործոններ, ինչպիսիք են գնաճը, իրական եկամուտների կրճատումը, արտարժույթի փոխարժեքը, կարող են իրենց բացասական ազդեցությունը թողնել Ընկերության գործունեության վրա:
3. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ գործունեությունը բնական գազի ներկրման ոլորտում խիստ կախված է տարբեր ֆորս-մաժորային իրադարձություններից (բնական և տեխնոգեն աղետներ) և տարածաշրջանային քաղաքական իրավիճակի վատթարացումից (մասնավորապես՝ տարանցիկ երկրների կամ գազ արտահանող երկրների կամ այդ երկրների և Հայաստանի միջև քաղաքական և տնտեսական հարաբերությունների դադարեցում, խզում, պատերազմական գործողություններ և այլն): Նման իրադարձության ի հայտ գալը կհանգեցնի Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն բնական գազի ներկրման խոչընդոտմանը կամ սահմանափակմանը: Սակայն հարկ է նշել, որ նման իրադարձության ի հայտ գալու դեպքում կարճաժամկետ հեռանկարում այդ խնդիրը մասնակիորեն լուծված կարելի է

համարել, քանի որ Ընկերության կողմից մշտապես որոշակի քանակությամբ գազ է պահեստավորվում Աբովյանի պահեստարանում:

4. Բնական գազի ներկրման ոլորտում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն մատակարարների ընտրության խիստ սահմանափակ հնարավորություններ ունի: Նման կախվածությունը մատակարարներից պարունակում է որոշակի ռիսկեր՝ կապված համապատասխան միջպետական, գերատեսչական և այլ պայմանագրային փոփոխությունների հետ: Սակայն, հաշվի առնելով մատակարարների և Ընկերության միջև առկա փոխկապվածությունը, մոտակա տարիներին նման ռիսկի ի հայտ գալու հավանականությունը փոքր է:
5. Արտարժութային ռիսկ: ՀՀ-ում դրամի փոխարժեքի տատանումները կարող են բացասաբար ազդել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ գործունեության վրա, քանի որ Ընկերությունը բնական գազի դիմաց վճարումներն իրականացնում է ԱՄՆ դոլարով:
6. ՀՀ-ում կորպորատիվ պարտատոմսերի շուկան դեռևս գտնվում է կազմավորման փուլում, և բացակայում է այս գործիքների ակտիվ երկրորդային շուկան: Հետևապես, Ընկերությունը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել իրենց համար շահավետ գնով: Իրացվելության ռիսկի աստիճանը նվազեցնելու նպատակով Ընկերության պարտատոմսերը ցուցակված են «Նասդաք Օէմեքս Արմենիա» ԲԲԸ-ում և այդ պարտատոմսերով ֆոնդային բորսայում կատարվում են պարտադիր գնանշումներ:

Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիր

2009թ. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն շարունակելու է իր գործունեությունն ու զարգացումը հետևյալ ուղղություններով.

- <u>բնական գազի ներկրման և բաշխման ոլորտում:</u> Նախատեսվում է փաստացի ավարտել բնական գազի շուկայի ընդլայնման ծրագիրը: Գազահամալիրի վերականգնում և հետագա զարգացում՝ ուղղված կայուն և անվտանգ գազամատակարարման ապահովմանը և կորուստների կրճատմանը:
- <u>գազաէներգետիկ ծրագրերի ոլորտում:</u> Գազաէներգետիկ ծրագրերի ներդրումային փուլերի իրացում:

Վերը նշված ոլորտները ներառում են հետևյալ ներդրումային ծրագրերը.

- Գազատրանսպորտային համակարգի զարգացում
- Գազաբաշխման ցանցի զարգացում
- Աբովյանի ԳՍՊԿ-ի վերակառուցում և արդիականացում
- Բաժանորդների միացում ցանցին
- Գազատրանսպորտային համակարգի ընդլայնում
- Իրան-Հայաստան գազամուղի առաջին հատվածում ճնշման նվազեցման կայանի կառուցում
- Սպառողների անվտանգության ապահովման նպատակով ազդանշանիչների տեղադրում
- Հրազդան 5 էներգաբլոկի շինարարություն և արդիականացում:

2009թ. ապրիլի 1-ից վաճառվող բնական գազի սակագները բարձրացել են: Այն սպառողների համար, որոնք ամսական սպառում են մինչև 1000 խ.մ. բնական գազ, և բնակչության համար սահմանվել է հետևյալ սակագինը. 96000 դրամ հազար խ.մ. բնական գազի համար նախկին 84000 դրամի փոխարեն: Իսկ այն սպառողների համար, որոնք ամսական սպառում են 1000 խ.մ. և ավելի բնական գազ, սահմանվել է հետևյալ սակագինը. 215 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ հազար խ.մ. բնական գազի համար նախկին 153.26 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի փոխարեն:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ
Տարեկան հաշվետվություն 2008

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և վստահելի ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման զեկույցը ճշգրիտ և վստահելի ձևով արտացոլում է Ընկերության բիզնեսային վիճակը, բիզնեսի արդյունքները ու զարգացումը և ներառում է այն ինֆորմացիան ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

29 մարտի 2009թ.

Կարեն Հարությունյան

Վարչության նախագահ-գլխավոր տնօրեն

Արմեն Ուռանյան

Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ

ERNST & YOUNG

Ernst & Young CJSC
1 Northern Ave., Office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 10 500790
+374 10 500705
Fax: +374 10 500706
www.ey.com/cis

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 10 500790
+374 10 500705
Ֆաքս. +374 10 500706
www.ey.com/cis

Թարգմանություն անգլերեն բնօրինակից

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդին և բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայռուսգազարդ» Փակ Բաժնետիրական Ընկերության և դուստր ընկերությունների (այսուհետ՝ «Խումբ») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների, համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների և համախմբված դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար պատասխանատու է ղեկավարությունը: Սույն պատասխանատվությունը ներառում է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և վարումը, ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ անցկացված աուդիտի հիման վրա եզրակացություն արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Սույն ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք մասնագիտական վարքագծի կանոններին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով: Ընտրված ընթացակարգերը հիմնված են աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Հարցի շեշտադրում

Առանց փոխելու մեր կարծիքը՝ ուշադրություն ենք հրավիրում ծանոթագրություն 25-ին, որտեղ նկարագրվում է Խմբի՝ կապակցված կողմերի հետ գործարքների էական կենտրոնացումը:

"Ernst & Young" CJSC

(ստորագրություն ըստ բնօրինակի)

10 հունիսի, 2009թ.